ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 22203; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 11 >> փետրվարի 2014 թվականի N 2 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 161-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, 63-րդ հոդվածով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեն հաստատելու մասին>> 161-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը 152343,1 (մեկ հարյուր հիսուներկու միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր) Հայատանի Հանրապետության դրամ, որից վարչական մաս՝ 151476,9 (մեկ հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ֆոնդային մաս՝ 866.2 (ութ հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել 2012 և 2013 թվականներին ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերին՝ առկա պարտավորությունների կատարմանը: Վարչական մասի 151476,9 (մեկ հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ մնացորդից 27103,3 (քսանյոթ միլիոն մեկ հարյուր երեք հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը թողնել վարչական մաս, 10874,2 (տաս միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը որպես սուբվենցիայի մնացորդ վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 114365.6 (մեկ հարյուր տասնչորս միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս,

ա. Եկամուտները՝ 3093281,6 (երեք միլիարդ իննսուներեք միլիոն երկու հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ

բ. Ծախսեր՝ 3.245.624,7 (երեք միլիարդ երկու հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ

2. Գյումրի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստաֆոնդի առաջին եռամսյակի նախատեսված 48886,4 (քառասունութ միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս:

3.Հաստատել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեն եռամսյակային բաշխումներով՝ համաձայն հավելվածներ NN 1-6:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղրամյան

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2014թ. փետրվարի 11
ք.Գյումրի